

## Տ. ՄԻՔԱՅԵԼ ՔՀՆ. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

### **Ք Ա Ր Ո Զ**

«Յանոն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ,  
ամէն»:

«Ամէն, ամէն ասեմ ձեզ զի որ հաւատապ՝  
ընդունի զկեանսն յախտենական» (Հովի.  
Զ 47):

Սիրելի և բարեպաշտ ժողովորդ, Մի-  
աստվածութան հավատքին բարձրացած  
հրեաները իրենց պատության ընթացքում  
սպասում էին ազգի փրկչին՝ Մեսիային,  
որը գալու էր Դավթի սերնդի մի շառավ-  
որդ՝ փրկելու համար նրանց գերեվարու-  
թյունից և վերահաստատելու ամեն կորց-  
րած բան...

Մարգարեների վկայությունները նախա-  
քիստոնեական երկարատև ժամանակա-  
հատվածի ընթացքում հոյս էին ներշնչում  
և զորացնում իրենց ժողովորդի հավատը՝  
պայծառ ապագայի հեռանկարներով...

Եվ մեր թվարկության հենց սկզբին ՄԵ-  
սիան եկավ աշխարհի ծնվելով Սուրբ կոյս  
Մարիամից մի անշուք մսուրի մեջ, փրկե-  
լու համար ոչ թե առանձին մի ազգ, այլ  
համայն մարդկությունը իր մեղքերից,  
բարձրացնելով նրան իր մեղավոր և ան-  
յալ վիճակից դեպի աստվածային մաքրու-  
թյուն և հաստատելու անարատ և անսահ-  
ման սեր մարդկանց միջն ու անսասան  
խաղաղություն երկորի վրա:

Սիրելի ժողովորդ, մարդկային կյանքը  
ի է խայտարես ու կյանող գայթակղու-  
թյուններով, փորձություններով և մոլորու-  
թյուններով: Մարդիկ միշտ ենթակա են  
մոլորվելու և մեղանչելու, քանի որ չարք  
անընդհատ նպաստավոր պայմաններ է  
ստեղծում բարու դեմ հաղթանակներ տա-

նելու: Եվ արդարեւ, ոչ ոք ապահովված չէ  
չարի դեմ անխախտ մնալուց. «զի ով է  
մարդ որ կեցցէ և ոչ մեղիցէ»: Քրիստո-  
նեական հավատի տեսանկյունից յորպա-  
նչյուր ոք ծնված է բարի և Աստծո  
կողմից պարգևված զանազան շնորհներով  
և ապրում է մարմնավոր աճի ու ներքին՝  
հոգևոր ձևավորման բարդ և երկարատև  
մի ընթացք: Սակայն այդ ընթացքում ան-  
խուափելիորեն ձեռք են բերվում նաև  
բացառական այլնայլ բնավորության գծեր  
և շեղումներ, որոնք էլ նրան միում են  
այցաքելու ուղիղ ճանապարհից և, ի  
հարկե, նաև մեղանչելու Աստծու առաջ:  
Մարդուն բնորոշ է իր ազատ կամքով և  
բանականությամբ գործել կամ ի ճապատ  
իրեն, և կամ իրեն դեմ: Նա մեղքեր է  
գործում կամս կամ ակամա, գիտությամբ  
և անգիտությամբ: Սա տարօրինակ է և  
կարծեք հակասական, քանի որ բոլորին  
համար պարզ իրողություն է մարդու ձզգ-  
տումը դեպի գեղեցիկը, լավը, վեհն ու բա-  
րին: Ավետարանի ոգին մարսած ճշմարիտ  
քրիստոնյան երբեք չի տատանվում, թոյլ  
չտալով չարին ներթափանցել իր հոգու  
մեջ, նա չի շեղվում և չի կորչում, որով-  
հետև Աստված իր մեջ է, իր հետ:

Սիրելի ժողովորդ, Աստված ուղարկեց  
իր Միածին Որդուն աշխարհ, որպեսզի նա  
իր անքիծ և աստվածային կյանքով կա-  
տարի իր Հոր կամքը, այսինքն խավարի  
մեջ խարխափող և մեղքերի ճամփաներում  
վիստացդ մարդկությանը լուսավորի, ցուց  
տարով այն ճշմարիտ ճանապարհը, որը  
կապահովի նրանց համար բուն կյանքը:  
Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, խաղաղու-

թյան և հավիտենական սիրո իշխանը, խաղաղությամբ ու Աստծու անսահման սիրով տոգորված կյանքի վարակող օրինակով եկավ մարդկանց մեջ սերմանելու եղբայրահիրության զաղափարը, ասելով. «Սիրեցէք զմիմեան»: Սակայն քառա երկար դարեր են անցել Փոկչի ծննդից, և տակավին մարդկությունը տառապում է խաղաղության տեսչով: Տառապում է, որովհետև եսափրությունից ու անձնական շահերից դրդված, մարդու էռոքունից ատերավառ հայացք է ճառագայթում դեպի իր հման մերը: Ուրեմն առանց փոխադարձ վատահության, հնարավոր չէ խաղաղության հաստատումը մարդկանց միջև երկրի վրա: Խաղաղությունը, տակայն, նախ պետք է սեփական անձի ներաշխարհում հաստատել, որովհետև նա, ով ինքն իր մեջ խաղաղ չէ, անկարող կիմնի խաղաղաբար լինելու ուրիշների համար: Ինքն իր մեջ խաղաղ լինելու ձեռք է բերվում միայն մեկ ճառապարհով՝ մեղքի աղտերից պրելով ու մաքրելով հոգու պատուհանները, որպեսզի փրկչական լուսը անարգել թափանցի այնտեղից ներս

և հրաշագործի: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ասում է. «Երանի այլոցիկ, որք սուրբ են սրտիք, զի նոքա զԱստուած տեսցեն»: Երանի նրանց, որոնք նոգով սուրբ են, այսինքն նրանց, ովքեր իրենք խաղաղ են և փոխադարձ սիրով և բարիկամեցողությամբ են սոգորված, նրանք պիտի տեսնեն Աստծոն: Քրիստոնեությունը եկավ մարդկանց օգնության, նուշեց նրանց հավիտենական կյանքին արժանանալու հնարավորությունը՝ անընդհատ կատարելագործվելու և մաքրվելու միջոցով:

Միթեի ժողովուրդ, եկեք ուրեմն մեր Տիրոց կյանքն ու վարդապետությունը բովանդակող սուրբ Ավետարանը այնպես ընթերցենք, որ լինենք նրա Աստվածային խոսքի ընդունարան, այդ խոսքը գործնականուն կիրառող խղճամիտ աշակերտները: Ապավինենք և հավատանք նրան, որովհետև նա է միակ ճառապարհը հավիտենական կյանք ունենալու:

Ընորհք, մեր և խաղաղություն Տառն մեր Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ հավիտյան, ամեն:

